





Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱԶԱՏ
ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳՉԱԼՆԱԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

A I
14801



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1977

78 AP 2
U 28 S

0000-9176(199809)20:3

© Հայաստանի երգչախմբային ընկերություն

1958 թվականին, երբ Սովետական Հայաստանի երաժշտական հասարակայնությունը նախապատրաստվում էր հանդիսավորությունը նըշելու աշխատանքի հերոս, վաստակավոր ուսուցիչ, շքանշանակիր կոմպոզիտոր Ազատ Մանուկյանի ծննդյան 80-ամյակը և ընդամենը մի քանի ամիս էր մնացել մինչև այդ նշանավոր տարելիցը, տեղի ունեցավ անխուսափելի՝ իր մահկանացուն կնքեց մանուկների սիրելին, այն անխոնջ գործիչը, որի դեմքից երբեք ժպիտը չէր հեռանում և որի առյուծաբաշ գլուխը կարծես դարձել էր անսպառ աշխատասիրության խորհրդանիշ։ Կյանքից հեռացավ համակ հոանդի մարմնացում, անձնուրացություն հասնող նվիրվածություն և իր ուսուցիչների գործի շարունակման համար երաժշտական-հասարակական լայն գործունեություն ծավալող այն գործիչը, որը կես դար շարունակ ապրեց ու գործեց մանուկների աշխարհում, իր ստեղծագործական և կազմակերպչական բոլոր ունակությունները մինչև վերջ ներդրեց այդ գործում։ Իր բազմամյա մանկավարժական, երաժշ-

տական-հասարակական, խմբավարական և ըս-
տեղծագործական աշխատանքում նա տվել է
նվիրվածության, ոգևորության ու հետևողակա-
նության հիանալի օրինակ: Իր գողտրիկ երգերի,
մանկական օպերաների ու երաժշտական պատ-
կերների շնորհիվ նա շարունակում է ապրել ու
մասնակցել աճող սերնդի գեղարվեստական դաս-
տիարակության վեհ գործին:

Սույն գրքույկը 1951 թվականին լույս տեսած
մեր գրքույկի վերանայված, լրացված ու հարըս-
տացված նոր օրինակն է, որի նպատակն է գծել
Ազատ Մանուկյանի կյանքի ուղին, բնութագրել
նրա մանկավարժական, երաժշտական-հասարա-
կական, խմբավարական գործունեությունն ու ըս-
տեղծագործությունը և այդ ամենով կենդանի
պահել հայ երաժշտության այդ անխոնջ սիրելի
մշակի կերպարը:

Ազատ Մանուկյանն անցել է կյանքի ծանր ու զրկանքներով լի ուղի: Ծնվել է 1878 թվականի դեկտեմբերի 15-ին Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքից (Թուրքիա) ոչ հեռու, Եփրատ գետից դեպի Դերսիմի սարերը բարձրացող սահարահարթի գյուղերից մեկում՝ Մեծ Ազարակում:

Ազատի հայրը՝ Մխնասը, գյուղի սափրիչն էր, ուներ իր արհեստանոցը, մի փոքրիկ այգի ու մի արտ, որը սակայն զրավ էր դրել մի թուրք վաշխառուի մոտ, որպեսզի նրանից ստանա 50 դրուշ (մոտ 5 ուրլի ոսկով)՝ ընտանիքի անհետաձգելի կարիքները հոգալու համար: Թեև նա կիսազրազեղ էր, բայց շատ ուսումնասեր, բանիմաց մարդ էր և ջանք չէր խնայում իր երեխաներին կրթության տալու համար: Իսկ Ազատի մայրը՝ Յուզաբերը, գյուղի զրազեղ կանանցից մեկն էր, ուներ հաճելի ձայն և սիրում էր երգել: Նա է առաջինը զրազիտություն սովորեցրել իր երեխաներին՝ Ազատին ու Պայծառին:

Իր սկզբնական կրթությունն Ազատն ստացել է իրենց գյուղի դպրոցում: Նրա ուսուցիչը Տաճատ վարժապետն էր, որն ավարտել էր Արմաշի վանքի ուսումնարանը և համարվում էր ուսյալ ու գիտուն մարդ: Իր աշակերտներին նա դաստիարակում էր հայրենասիրական ոգով՝ այդ նպա-

տակին հասնելու համար հաճախ դիմելով հայ ժողովրդի պատմութեան հերոսական գրվազների պատկերմանը: Ութ-ինը տարեկան հասակում Ազատն սկսում է սովորել նրա մոտ և դառնում է առաջագիմ աշակերտներից մեկը: Երբ Տաճատ վարժապետի ղեկավարութեամբ, դպրոցի աշակերտների ուժերով, բեմադրվում է «Վարդանանց պատերազմը» պիեսը, Ազատը մասնակցում է որպէս դերակատար: Դա առաջին աշակերտական ներկայացումն էր ոչ միայն Ազատի կյանքում, այլև իրենց գյուղում ընդհանրապէս, որը զգալի տպավորութիւն գործեց գյուղացիների վրա՝ արժանանալով նրանց խրախուսանքին:

Ազատի հայրը թեև աշխատում էր օր ու գիշեր, բայց չէր կարողանում հոգալ ընտանիքի կարիքները և միաժամանակ փող վաստակել՝ իր պարտքը վճարելու և թուրք վաշխառուի մոտ գրավ գրված արտը հտ վերագարձնելու համար: Շուտով նա ստիպված է լինում թողնել հայրենի գյուղը և մեկնել Բաթում: Այստեղ նա իր կնոջ եղբոր հետ միասին բացում է սրճարան ու վարսավիրանոց և սկսում հաջողութեամբ աշխատել: Շատ չանցած նա իր մոտ է կանչում Ազատին, որպէսզի վերջինս իր ուսումը շարունակի քաղաքի հայկական դպրոցում:

Ազատի համար շատ ծանր էր բաժանվել մորից և մեկնել հեռու քաղաք: Բայց մայրը կարողանում է համոզել նրան, թե նա այնտեղ ուսում կառնի, «գիտնական վարժապետ» կդառնա, ծով

կտեսնի և ապա կվերադառնա դյուղ և Տաճատ վարժապետի նման կսկսի աշխատել: Այս հեռանկարը գրավում է պատանի Աղատին, և նա իրենց համադյուղացիների քարավանի հետ ուղևորվում է ծովափնյա Տրապիզոն քաղաքը, իսկ այնտեղից էլ՝ Բաթում: Նրա վրա անջնջելի տպավորություն են թողնում այն երգերը, որոնք երգում էին պանդուխտ հայերը իջևաններում: Այդ երգերից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ «Արի մանան», «Վարդ կոշիկ» երգի մի տարբերակը և այլ երգեր հետագայում նոտագրել և օգտագործել է Աղատ Մանուկյանը: Այդ երգերը նա տրամադրել է նաև Ալ. Սպենդիարյանին և Ռ. Մելիքյանին, որոնք օգտագործել են իրենց ստեղծագործություններում¹:

Բաթումում Աղատը սովորում է տեղի հայկական դպրոցում: Նա մեծ հռանդով պարապում է, սակայն հոր գործերի անհաջողության հետևանքով նրա ուսումը դարձյալ կիսատ է մնում: Հըրդեհի հետևանքով զրկվելով սրճարանից ու վարսավիրանոցից, նրա հայրն ստիպված է լինում թողնել Բաթումը և մեկնել Բիֆլիս: Որոշ ժամանակ անց, երբ քիչ թի շատ կարգավորվում են նրա գործերը, նա նորից Աղատին կանչում է իր մոտ: Այստեղ նա ծանոթանում է Բիֆլիսի ներսիսյան դպրոցի հոգաբարձու Ղևոնդ քահանա

1 Տե՛ս Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի «Կանանց պարը» (3-րդ գործողություն) և Ռ. Մելիքյանի «Սև կաթավիկ» երգի երկրորդ մասը:

հարազյանի¹ հետ, որը խոստացել էր երեխային տեղավորել Ներսիսյան դպրոցը:

Ազատն անմիջապես շտապում է Թիֆլիս, բայց ուսումնական տարին վաղուց սկսված լինելու պատճառով նրան չի հաջողվում ընդունվել Ներսիսյան դպրոցը: Նա սովորում է մի այլ դպրոցում, իսկ հաջորդ տարի՝ 1892 թվականի սեպտեմբերին մեծ դժվարությամբ ընդունվում է Ներսիսյան դպրոցի առաջին դասարանը:

Հիմնական առարկաների հետ միասին այստեղ հատուկ ուշադրություն էր դարձվում երգեցողությանը: Ազատի երգեցողության դասատուն Գալուստ Աբուլյանն էր, որը հետագայում դարձավ Մակար Եկմալյանի օգնականը երգչախմբի գծով: Ներսիսյան դպրոցի քառաձայն երգչախումբը գոյություն ուներ նաև Եկմալյանի դալուց առաջ, որի ղեկավարն էր Եղնիկ քահանա Երզնկյանը: Նրա ղեկավարությամբ այդ երգչախումբը ելույթներ էր ունենում տարեվերջի հանդեսներին և այլ առիթներով, բայց միայն դպրոցի ներսում: Դպրոցի աշակերտությունը սովորում էր միայն հայկական ձայնագրություն (Լիմոնջյանի սիստեմ) և հոգևոր երաժշտություն: Դրությունը փոխվեց, երբ որպես երաժշտության դասատու և երգչախմբի ղեկավար Պետերբուրգից հրավիրվեց Մակար Եկմալյանը՝ 1892 թվականին: Դրանից մի քանի տարի առաջ (1888 թ.) Եկմալյանն ավար-

¹ Հայկական ՍՍՀ Ժողովրդական դերասան Ամո Խարսույանի հայրը:

տել էր Պետերբուրգի կոնսերվատորիան և առաջինն էր արեւելահայ իրականութեան մեջ, որ զինված ազատ արվեստագետի դիպլոմով, նվիրվել էր հայ երաժշտութեան զարգացմանը: Պետերբուրգում ապրած տարիներին նա, ուսմանը զուգընթաց, զբաղվել է հայկական պատարագի մշակմամբ, գրել է նաև աշխարհիկ գործեր, այդ թվում «Ռոզայի թափառումները» կանտատը, որը և դարձավ նրա դիպլոմային աշխատանքը: Կոնսերվատորիան ավարտելուց հետո նա շարունակում է ղեկավարել և՛ Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախումբը, և՛ ստեղծագործել: Բայց այդ չէր կարող բավարարել նրան: Նա ձգտում էր վերադառնալ հայկական միջավայր և ստանալ գործունեության ավելի լայն ստապարեզ: Երբ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձութունը նրան հրավեր ուղարկեց, առաջարկելով ստանձնել դպրոցի երաժշտության դասատուի և երգչախմբի ղեկավարի պարտականութունները, նա ուրախութեամբ համաձայնվեց:

Եկմալյանը մեծ եռանդով ու նվիրվածությամբ սկսեց աշխատել Ներսիսյան դպրոցում: Նա բարձր դասարաններում ավանդում էր երգեցողութուն, սովորեցնում հայկական ու եվրոպական նոտագրութուն, թեև վերջինս նախատեսված չէր դպրոցի ծրագրով: Համառու և քրտնաջան աշխատանքով նա այնպիսի բարձրության հասցրեց դպրոցական երգչախումբը, որ այն դարձավ հայկական առաջին իսկական պրոֆեսիոնալ երգչա-

խումբը և նրա համբավը տարածվեց ամենուրեք։ Նա թուլլտուլթյուն ստացավ կիրակի օրերը երգչախմբով կատարել իր մշակած պատարագի հատվածները Թիֆլիսի եկեղեցում, որտեղ ամեն կողմից ձգտում էին հաղարավոր հայեր և օտարազգի երաժշտասերներ՝ հիանալով եկամուլյանի երգչախմբի բարձրարվեստ կատարմամբ։

Ազատ Մանուկյանը, այնուհետև, երրորդ դասարանում դառնում է եկամուլյանի աշակերտը։ Նա շատ խստապահանջ էր աշակերտների նկատմամբ, ուստի Ազատն ամեն կերպ աշխատում էր բավարարել նրա բոլոր պահանջները և երգեցողությունից ստանում էր լավ գնահատական։ Նա շատ էր ցանկանում երգել եկամուլյանի երգչախմբում և առիթը բաց չէր թողնում խնդրելու նրան այդ մասին։ Իսկ նա լսում ու անցնում էր և կամ պատասխանում՝ դեռ վաղ է։

Չորրորդ դասարանում նրա դասընկերներն էին Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, Ամո Խարադյանը, Սիմակ Սահակյանը և ուրիշներ։ Նրանցից շատերը երգում էին եկամուլյանի երգչախմբում։ Արմենակ Շահմուրադյանն ու Տիգրան Նալբանդյանը հաճախ հանդես էին գալիս նաև որպես մենակատարներ։ Պարզ է, թե որքան բուռն ցանկությամբ Ազատն ուզում էր լինել նրանց հետ, երգել նույն խմբում։ Այս է պատճառը, որ նա համառորեն կրկնում էր իր խնդրանքը։ Եվ ահա մի օր էլ եկամուլյանը նրան ասում է. «Վաղը կգաս, ձայնդ կփորձեմ»։ Ազա-

տը հրճվանքի մեջ էր: Վերջապես պիտի իրա-
դործվեր իր նվիրական բաղձանքը: Ահա թե ինչ-
պես է նա իր հիշողություններում նկարագրում
այդ օրվա ապրումները.

«Ուրախությանս շատ չկար: Չեմ հիշում, ինչ-
պես եմ անցկացրել օրը, զիշերը և մյուս օրվա
դասերը: Փորձի ժամին նորից կանգնած եմ: Ե-
կավ եկմալյանը: Ներս արի,—ասաց սառնու-
թյամբ: Մտա ներս: Նստած է խումբը լուռ և
հանդիստ, ծպտուն չի լսվում: Նրանց մեջ են իմ
դասընկերները՝ Տիգրան Նալբանդյանը և Արմե-
նակ Շահմուրադյանը: Դաշնամուրի վրա ձայներ
ալկեց, վերցրի, նորից փորձեց ելեէջը, վերցրի:
Մի քիչ մտածեց և հանդարտ ասաց. «Գնա այն
կողմ ու նստիր բասերի մեջ»: Խմբի մեջ քրքիշ
առաջացավ: Այն կողմը մեծ տղաներն էին: Գը-
նացի ու նստեցի: Այդ օրից ես ինձ հպարտ էի
զգում՝ եկմալյանի խմբի մեջ էի»¹:

Չորս տարի Ազատ Մանուկյանը երգեց եկ-
մալյանի երգչախմբում: Այդ տարիներին նա
եկմալյանի անմիջական ղեկավարությամբ ոչ
միայն երգեց պատարագի հատվածները, այլև
բաղմաթիվ ժողովրդական ու ազգային-հայրենա-
սիրական երգերի մշակումներ և ինքնուրույն
ստեղծագործություններ, որոնք կատարվում էին
յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում տե-

1 Ա. Մանուկյան, իմ հիշողությունները, էջ 9 (ձեռագիր),
Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության
և արվեստի թանգարանի հրաժշտության բաժնի նյութերից:

ղի ունեցող դպրոցական հանդեսների ժամանակ: Սրանով պիտի բացատրել այն, որ Ազատը շատ քիչ գիտեր Եկմալյանի ստեղծագործությունները և հետագայում, իր խմբավարական աշխատանքի ընթացքում, հաճախ էր դրանք կատարում համերգներում:

Եկմալյանի համբավն արդեն տարածվել էր հայաբնակ քաղաքներում ու գյուղերում և շատերն էին ձգտում աշակերտել նրան, ձեռք բերել երաժշտական-տեսական և խմբավարական արվեստի գիտելիքներ: Հատկապես նշանակալից է այն, որ 1895 թվականի աշնանը Թիֆլիս եկավ երիտասարդ Կոմիտասը և մի ամբողջ ուսումնական տարի պարապեց Եկմալյանի մոտ ու նախապատրաստվեց կոնսերվատորիայի ընդունելության քննություններին: Այստեղից էլ նա հաջորդ տարվա մայիսին մեկնեց Բեռլին և սովորեց պրոֆ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում: Այդ ուսումնական տարվա ընթացքում Կոմիտասը միշտ ներկա էր լինում Եկմալյանի երգչախմբի փորձերին և ուսումնասիրում նրա խմբավարական արվեստը, որը հետագայում կարևոր նշանակություն ունեցավ նրա գործունեության համար: Ահա այս փորձերի ընթացքում էլ Ազատը ծանոթացավ Կոմիտասի հետ, և այդ ծանոթությունը հետագայում հիմք դարձավ համատեղ կազմակերպված համերգների համար:

Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին Ազատի տնտեսական դրությունը ծանր էր: Նա

ապրում էր 7 ուրբլի թռչակով, որը նշանակվել էր նրան խրիմյան Հայրիկի կաթողիկոսական օծման հանդեսին եկած իր հայրենակիցների պատգամավորության խնդրանքով: Ապրուստի այդ նվազ աղբյուրն էլ ցամաքում է հիվանդության պատճառով, նրա հինգերորդ դասարանում երկրորդ տարին մնալու պատճառով: Ստեղծված դրությունից ելք փնտրելով՝ նա սերտ կապի մեջ է մտնում բանաստեղծ Հակոբ Հակոբյանի հետ, իսկ վերջինիս միջոցով՝ Ստեփան Շահումյանի հետ: Նա իբրև երգիչ (բաս) մասնակցում է Հակոբ Հակոբյանի կազմակերպած երգչախմբին, որի նպատակն էր երեկույթների և ցերեկույթների միջոցով դրամական միջոցներ ապահովել բանվորական հեղափոխական շարժման կարիքների համար: Այս երգչախմբի փորձերը տեղի էին ունենում նրա տանը: Խմբի կազմի մեջ ընդգրկված էին հեղափոխական տրամադրություն ունեցող բանվորներ ու ծառայողներ: Նման մի երգչախումբ էլ կազմակերպվում է Ստեփան Շահումյանի տանը: Այս խմբին մասնակցում էին Շահումյանի երկու քույրերը, իսկ խմբի ղեկավարն էր Ազատը, որը եռանդով ու նվիրվածությամբ էր կպել գործին, թեև խմբավարական աշխատանքի ոչ մի փորձ չուներ: Ազատի ծավալած այս գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկություններ են հասնում Նկմալյանին, որը սաստիկ վրդովվում է խմբավարության համար բոլորովին անպատրաստ իր

աշակերտի հանդգնության վրա և դիմում է դըպ-
րոցի տեսուչին՝ խնդրելով կարգի հրավիրել նը-
րան: Եվ տեսուչը Աղատ Մանուկյանին նկատո-
ղություն է անում և որպես պատիժ երկու շա-
բաթով զրկում պարապմունքներին հաճախելուց:
Սակայն ոչ նկատողությունը և ոչ էլ պատիժը
չեն զգաստացնում նրան: Երիտասարդական ան-
դուսպ ոգևորությամբ ու համառությամբ նա շա-
բուռնակում է սկսած դորժը: Տեսուչի ու Եկմալյա-
նի հրամանին ենթարկվելու փոխարեն նա Մուղ-
նու եկեղեցու համար քառաձայն երգչախումբ է
կազմակերպում՝ ընդգրկելով Եկմալյանի երգչա-
խմբի երգիչներից մի քանիսին: Այս արդեն բո-
լորովին անհանդուրժելի էր, և Եկմալյանը կտրա-
կանապես պահանջում է անհնազանդ Մանուկյա-
նին հեռացնել դպրոցից: Այդպես էլ արվում է:

Ներսիսյան դպրոցի նախավերջին դասարանից
ընդհատելով իր ուսումը, Աղատ Մանուկյանը,
որն արդեն չափահաս երիտասարդ էր, շարունա-
կում է իր խմբավարական գործունեությունը:
1897-1898 թվականներին նա պայմանագիր է
կնքում Թանդոյան եկեղեցու երեցփոխի հետ
և պարտավորվում է կազմակերպել քառաձայն
երգչախումբ: Այս խմբի կորիզը բանաստեղծ Հ.
Հակոբյանի տանը կազմակերպված երգչախումբն
էր: Այս բանին մեծապես նպաստում է ինքը՝
Հակոբ Հակոբյանը, որը շահագրգռված էր երե-
կույթների համար մշտական խումբ ունենալու
մեջ: Երգչախմբի պարապմունքներն սկսվում են

1897 թ. սեպտեմբերից, իսկ հաջորդ տարվա հունվարի 5-ին տեղի է ունենում նրա առաջին ելույթը, որն անցնում է հաջողությամբ, թեև իբրև խմբավար Մանուկյանը, ինչպես ինքն է վկայում իր հիշողություններում, դեռևս թերուս էր և չէր համապատասխանում իր ստանձնած պաշտոնին:


Գործնական աշխատանքում նրա համար ավելի զգալի էր երաժշտական պատրաստականության պակասը, և նա միջոցներ էր որոնում այն լրացնելու համար: Նրա բախտից 1899 թվականին Քր. Կարա-Մուրզան արդեն վերադարձել էր իր համերգային շրջադաշտություններից և հաստատվելով Թիֆլիսում՝ իրեն հատուկ ոգևորություն էր ցուցնում ծավալում է լայն գործունեություն: Ազատ Մանուկյանը նախ երգում է նրա երգչախմբում, իսկ երբ բացվում են խմբավարական դասընթացները՝ դառնում նրա առաջին մասնակիցներից մեկը: Վեցամսյա այդ դասընթացների նպատակն էր պատրաստել այնպիսի խմբավարներ, որոնք կարողանային ինքնուրույն կերպով երգչախումբ կազմակերպել և ղեկավարել բազմաձայն պատարագի կատարումը եկեղեցիներում և երեկույթներ ու ցերեկույթներ՝ դպրոցներում ու քաղաքային համերգասրահներում: Մ. Նկմալյանի «Պատարագի» լույս ընծայումից հետո (1896 թ., Լայպցիգ) ամեն կողմից խմբավար ունենալու պահանջներ էին ներկայացվում Նկմալյանին: Վերջինիս աշակերտներից

շատերը, որոնք ավարտել էին Թիֆլիսի ներսիս-
յան դպրոցը, երգել էին նրա երգչախմբում,
բայց խումբ ղեկավարելու հատուկ գիտելիքներ
չէին ստացել, հանձն էին առել խմբեր կազմա-
կերպել ու ղեկավարել: Պարզ է, որ այդպիսի
«խմբավարների» կատարած պատարազը պիտի
ունենար բազմաթիվ թերություններ և լիներ ցած-
րորակ: Այս մասին հաճախ են գրում հայկական
թերթերի թղթակիցները և դրա վրա դարձնում
եկեղեցական երեցփոխների և հատկապես Եկ-
մալյանի ուշադրությունը: Վերջինս հրապարա-
կայնորեն պատասխանելով այդ կարգի քննադա-
տություններին և ընդառաջելով հասարակության
պահանջին՝ հայտարարում է խմբավարական
դասընթացներ կազմակերպելու մասին: Մեկ
տարվա տևողությամբ այդ դասընթացներն ա-
վարտողները պետք է ստանան ինչպես պաշտոնական
վկայական և երգչախմբեր կազմակերպելու և ղե-
կավարելու իրավունք: Դժբախտաբար այս կարե-
վոր նախաձեռնությունը չիրագործվեց, որով-
հետև եկեղեցական երեցփոխները զլացան իրենց
վրա վերցնել ծախսը և համապատասխան մար-
դիկ ուղարկել Եկմալյանի կողմից կազմակերպ-
վող դասընթացներին:

Ահա այս պայմաններում օգնության հասավ
Քր. Կարա-Մուրզան, որը կազմակերպեց վեց-
ամսյա, ավելի մատչելի պայմաններով, խմբա-
վարական դասընթացներ: Այդ դասընթացներում
սովորելով, Ազատ Մանուկյանը հեշտությամբ



Ռադիկոմիտեի
մանկական երգչախումբը



10841
A

յուրացրեց նախատեսված ծրագիրը, որովհետև նա ներսխյան դպրոցում արդեն երաժշտական որոշ պատրաստականություն էր ստացել և ուներ երգչախումբ ղեկավարելու փորձ: Այդտեղ նա սովորեց երաժշտության տեսություն, սոլֆեջիո, հարմոնիա և երգչախմբերի կազմակերպման կանոնները (սկսած ձայնափորձից մինչև ուսուցումն ու ղեկավարումը): Բացի այդ, Կարա Մուրզայի ղեկավարութեամբ իր ընկերների հետ միասին նա անցնում է Եկմալյանի ամբողջ պատարագը (որը խմբավարական դասընթացների ծրագրի պարտադիր կետերից մեկն էր), ժողովրդական և ազգային-հայրենասիրական երգեր Կարա Մուրզայի մշակմամբ և այլն:

Խմբավարական դասընթացի պարապմունքներին հաճախելու հետ միաժամանակ, Ազատ Մանուկյանը շարունակում է աշխատանքն իր երգչախմբի հետ, մասնակցում է Կարա-Մուրզայի երգչախմբի համերգներին, երբեմն էլ ինքն է համերգներ կազմակերպում: Առանձնապես ուշադրով էր այն համերգը, որը տեղի ունեցավ 1900 թվի փետրվարի 24-ին Ավճալայում, բանվորական լսարանի համար: Համերգի ծրագրում տեղ էին գտել ժողովրդական և ազգային-հայրենասիրական երգեր, դրանց թվում՝ Կարա-Մուրզայի մշակած «Հոյ, Նազան իմ», «Ջան դյուլում», «Քեզի մեռնեմ» և այլ խմբական երգեր: Որպես մեծակատար, խմբի հետ հանդես է գալիս բանաս-



տեղծ Հակոբ Հակոբյանը, որն ուներ լավ ձայն (լիրիկ տենոր) և Կարա-Մուրզայի կազմակերպած երգչախմբերի հետ հաճախակի ելույթներ էր ունեցել Բաքվում և Թիֆլիսում: Այս անգամ նա կատարում է «Սիրուհիս», «Քեզ համար» երգերը և արժանանում ունկնդիրների ջերմ ընդունելությանը: Համերգն ունենում է հաջողություն: Գոհ են մնում թե՛ ունկնդիրները և թե՛ Կարա-Մուրզան, որն օգնել էր երիտասարդ խմբավարին ծրագրի նախապատրաստման դործում: Բայց բոլորից ավելի ոգևորված էր ինքը խմբավարը՝ տեսնելով իր աշխատանքի արդյունքները:

Այս համերգը փաստորեն ավարտականի նըշանակություն ունեցավ, և ավարտելուց հետո նա աշխատանքի է մեկնում Վլադիկավկազ (այժմ Օրջոնիկիձե), որտեղ կար բավականին հաշ ազգաբնակչություն: Հաղթահարելով ձմռան դժվարությունները, նա Ռազմավիրական ճանապարհով հասնում է Վլադիկավկազ և տեղավորվում իր դասընկեր Դավթյանի տանը: Այս նույն դասընկերոջ օգնությամբ սկսվում է երգիչների ցուցակագրումը երգչախմբի համար: Ցուցակագրվում են հասակավոր տղամարդիկ ու կանայք, երիտասարդ տղաներ ու աղջիկներ և մասնավորապես քաղաքի ռուսական գիմնազիայի բարձր դասարանների աշակերտները: Ցուցակագրվողների թիվը հասնում է 70-ի և բոլորն էլ մեծապես ոգևորված էին, որովհետև խմբավարը եկել էր Թիֆլիսից և Կարա-Մուրզայի աշակերտն էր: Նրան-

ցից շատերը ժամանակին երգել էին Կարա-Մուր-
զայի խմբում և դեռ թարմ էր այդ նշանավոր
գործչի թողած ազդեցությունը: Այս հանգամանքը
մի կողմից օգնում էր խմբավարին, քանի որ
երգերից շատերը ծանոթ էին երգչախմբի ան-
դամներին և հեշտությամբ կարելի էր պատրաս-
տել, բայց մյուս կողմից դժվարանում էր նրա
խնդիրը, որովհետև Կարա-Մուրզային լսելուց
հետո տեղի հասարակությունը չէր հանդուրժի
ցածրորակ կատարում: Առաջին անգամ նա գործ
պիտի ունենար անծանոթ հասարակության հետ
և դա նրան վախ էր ներշնչում: Բայց այստեղ
նրան օգնության են հասնում Կարա-Մուրզայի
խրատներն ու սովորեցրած կազմակերպչական
ձևերը, Եկմալյանի փորձը և իր ինքնավստահու-
թյունը: Նրան գոտեպնդում է նաև այն, որ ըստ
պայմանավորվածության նա առաջին հերթին
պիտի սովորեցնեի Եկմալյանի պատարագը, որն
անգիր գիտեի, քանի որ երգել էր թե՛ Եկմալյա-
նի խմբում և թե՛ Կարա-Մուրզայի խմբավարա-
կան դասընթացում սովորելու շրջանում:

Նշանակված օրը նա մտնում է հայկական
եկեղեցուն կից դպրոցի դահլիճը, որտեղ արդեն
հավաքվել էին խմբի մասնակիցները: Նրան դի-
մավորում են ծափահարություններով: Երեցփոխի
կողմից ներկայացվելուց հետո նա ըստ ձայների
բաժանում է հավաքվածներին և սկսում առաջին
փորձը: Իր ուսուցչի օրինակով նա որպես փորձ-
նական նյութ օգտագործում է «Խալապի աղջկա

երգը» (խոսք՝ Մ. Նազբանդյանի), որը ծանոթ էր բոլորին: Մի քանի անգամ փորձելուց և սխալներն ուղղելուց հետո հնչում է քառաձայն առաջին երգը: Առաջին փորձի հաջողությունն արդեն կանխորոշում է գործի բարեհաջող ավարտը: Իսկ տեղի հասարակության ներկայացուցիչները խոստանում են ձեռք բերել դաշնամուր և ամեն կերպ աջակցել երգչախմբի աշխատանքներին: Բացի այդ, նրան խնդրում են ստանձնել նորաբաց հայկական դպրոցի երգեցողության դասերը, և նա համաձայնում է:

Սկսվում է սիստեմատիկ աշխատանք երգչախմբի հետ և այն շուտով տալիս է իր պատուհները: Կիրակի օրերը հայկական եկեղեցում երգչախմբի կատարմամբ հնչում է պատարագի արարողության երգեցողությունը և այն լսելու համար եկեղեցին ու նրա բակը լիկ-լիկում էր հայ հասարակությամբ: Իսկ երբ երգչախումբը, պատարագից բացի, պատրաստում և սկսում է երգել նաև ժողովրդական ու ազգային-հայրենասիրական երգեր, ապա դրանք հասարակության կողմից ընդունվում են առանձին ոգևորությամբ:

Երգչախմբի կազմում Լիսիցյանների ընտանիքից երգում էին երեք եղբայր և երկու քույր: Նրանց թվում էին այժմ լայն ժողովրդականության վայելող, նշանավոր երգիչ Պ. Լիսիցյանի հայրն ու մայրը: Քիչ ավելի ուշ երգչախմբի աշխատանքներին մասնակից է դառնում նաև Պետերբուրգի կոնսերվատորիայի ստեղծագործական

Ֆակուլտետի ուսանող Պավել Մամուլյանը, որը լավ դաշնակահար էր և հանձն էր առել ամեն կերպ օգնել խմբավարին: Իսկ խմբավարը ոչ միայն դբադված էր դպրոցի երգեցողության դասերով ու խմբի ղեկավարությանմբ, այլև ինքնակրթությամբ՝ ձգտելով վերացնել իր երաժշտական կրթության պակասը: Եվ քանի որ նա ամենից ավելի սուր կերպով զգում էր դաշնամուրին չըտիրապետելու պակասը, որն անմիջապես խանգարում էր իր ամենօրյա աշխատանքին, ապա նա ամեն կերպ աշխատում էր լրացնել այդ պակասը: Վլադիկավկազում այդ տարիներին ապրում էր դաշնակահարուհի Նեստերովսկայան, որի օգնությանն էլ դիմում է նա և սխտեմատիկ դասեր վերցնում նրանից:

Երգչախմբի հաջողությունը խթան է դառնում սկսելու ոչ միայն եկեղեցու շենքի վերանորոգումը, այլև նոր դպրոցական շենքի կառուցումը, որի համար հայտարարված հանգանակությունը լավ արդյունք է տալիս՝ հավաքվում է պահանջվող գումարը: Երգչախումբն իր հերթին նպաստում է այդ գործին՝ իր համերգներից զոյացած գումարի զգալի մասը հատկացնելով այդ նպատակին:

Առանձնապես հիշատակության արժանի է երգչախմբի այն համերգը, որը տեղի ունեցավ 1900 թվականի օգոստոսի 5-ին՝ բարեգործական նպատակով: Համերգի ամբողջ հասույթը հատկացվելու էր Ախալքալաքի երկրաշարժից տու-

ժածներին: Խմբի երգիչներն իրենց հաշվին պատվիրել էին հատուկ զգեստներ՝ Ախալքալաքի-Ախալցխայի հայկական տարազ: Հայտնի է, որ ինքը՝ Կարա-Մուրզան առանձին նշանակություն էր տալիս ազգային տարազին, քանի որ այն իր հերթին նպաստում էր հայ հասարակության ազգային ինքնագիտակցության արթնացմանը: Այս հանգամանքը լավ հայտնի էր Ազատ Մանուկյանին, և նա ինքն էր ամեն կերպ աշխատում, որ երգչախմբի տարազը լինի պատշաճին: Օսեթ բանաստեղծ Կոստա Խեթագուրովն էլ դործուն մասնակցություն է ցուցաբերում համերգի նախապատրաստմանը: Նա պատրաստում է կենդանի պատկերներ Ախալքալաքի երկրաշարժից ու արևմտահայերի կյանքից: Համերգի ծրագիրը շատ ճոխ էր և ունենում է մեծ հաջողություն: Համերգից և նվիրատվություններից զոյացած գումարը կազմում է 10.000 ուրլի, որն անմիջապես ուղարկվում է Ախալքալաքի երկրաշարժից վնասվածների օգնության կոմիտեին:

Այս համերգից հետո հասարակությունը Ազատ Մանուկյանին նվիրում է մեծ ոսկե ժամացույց, որի կափարիչի վրա ներսի կողմից փորագրված էր՝ «В знак благодарности от Влади-кавказских армян, 1900 года 5-го августа».

Համերգի նման հաջողությունից ելնելով որոշվում է կազմակերպել երգչախմբի համերգային շրջադալություն Հյուսիսային Կովկասի հայաբնակ բաղաձները: Բացի հայերից, խմբի կազմի մեջ

ին մտնում նաև ուսաներ, վրացիներ և օսեթներ։ Դրան համապատասխան էլ համերգի ծրագիրը կազմվում է չորս լեզվով՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն և օսեթերեն։ Այն ժամանակվա պայմաններում իհարկե հնարավոր չէր շրջագայության մեկնել՝ խմբի կազմի մեջ ունենալով կանայք ու աղջիկներ։ Նրանց ծնողներն ու ամուսինները պարզապես արգելում են այդ։ Ազատ Մանուկյանն ստիպված էր հաշվի առնել այդ և երգչախումբը նախապատրաստել արական կազմով, երգել տալով եռաձայն երգեր։ Խմբի դաշնակահարն էր Պավել Մամուկյանը։ Խմբավարի հետ միասին այն բաղկացած էր 20 հոգուց. կային նաև պարողներ։

Համերգային շրջագայությունն ընդգրկելու էր Գրոզնի, Գեորգիևսկ, Արմավիր, Կավկազսկայա, Կրասնոդար, Ռոստով Դոնի վրա և վերադարձին՝ Միներալնիե Վոդի¹։ Ճանապարհի ծախսերը հոգալու համար խումբն իր առաջին ելույթը կազմակերպում է Վլադիկավկազում։ Հետագա համերգների մուտքի մի մասը պիտի հատկացվեր Կարա-Մուրզայի երգերի տպագրությանը։

Երգչախմբի համերգները մեծ հետաքրքրություն են առաջացնում հասարակության մեջ և ամենուրեք անցնում են հաջողությունամբ։ Կրասնո-

1 Շրջագայության այս ծրագիրը լրիվ չի իրագործվում։ Երգիչներից մի քանիսի հոգնածության ու հիվանդության պատճառով խումբը չի լինում Ռոստովում և Միներալնիե Վոդիում։

դարում գտնված ժամանակ նահանգապետն արգելում է հայերեն երգերի հրապարակային կատարումը, պատճառաբանելով, թե հայերն իրավունք ունեն միայն եկեղեցում երգել: Սակայն նահանգապետի կնոջ միջնորդությամբ խումբը հաջողությամբ շարունակում է իր համերգները: Հատկապես մեծ է լինում խմբի հաջողությունը Արմավիրում, որտեղ նրան մեծապես օժանդակում է տեղի հայկական դպրոցի երգեցողության դասատու և խմբավար Շահան Սիմոնը:

Վերադառնալով Վլադիկավկազ, Ազատ Մանուկյանը շարունակում է աշխատանքը: Բայց նրա երգչախմբի համերգային հաջող շրջագայությունը, որի համբավը տարածվում է Հյուսիսային Կովկասի քաղաքներում, պատճառ է դառնում, որ Ազատ Մանուկյանին հրավիրեն այլ քաղաքներից: Առաջինը նրան հրավիրում են Գրոզնի՝ տեղում երգչախումբ կազմակերպելու և համերգ տալու նպատակով: Նա շարաթական երկու անգամ մեկնում է Գրոզնի և պարապում նոր կազմակերպված երգչախմբի հետ: Շատ չանցած Գրոզնու թատրոնում տեղի է ունենում այս երգչախմբի համերգը, որը մի քանի օրից հետո կրկնվում է Դերբենդում:

1902 թվականի ամռանը Ազատ Մանուկյանին երկու ամսով հրավիրում են Ղզլար՝ եկեղեցու համար երգչախումբ կազմակերպելու նպատակով: Տեղում նրա աշխատանքի համար ըստ տեղծում են բոլոր անհրաժեշտ պայմանները, և

նա ևռանդով գործի է անցնում: Երգչախումբը բաղկացած էր 70-80 հոգուց, մեծ մասամբ ուսանողներ, որոնք Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից վերադարձել էին իրենց հայրենի քաղաքը՝ ամառային արձակուրդները հարազատների հետ անցկացնելու համար: Այդ ուսանողների թվում էին անբաժան ընկերներ Ռոմանոս Մելիքյանը և Դավիթ Սողոմոնյանը, որոնք այդ շրջանում սովորում էին Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում և որոնց հետ նա հաստատում է ընկերական ջերմ հարաբերություններ:

Այստեղ Մանուկյանի կազմակերպած երգչախումբը ոչ միայն հաջողությամբ կատարում է եկամյանի պատարագը հայկական եկեղեցում, այլև տալիս է մի համերգ, որը նույնպես անցնում է հաջողությամբ: Նա գոհ վերադառնում է Վլադիկավկազ՝ իր հետ տանելով ջերմ հիշողություններ կապված իր նոր ընկերների հետ: Նրա վրա հատկապես խոր տպավորություն են գործում Ռոմանոս Մելիքյանի հետ ունեցած զրույցները, որոնք նորից իր մեջ արթնացնում են ուսման ծարավը: Եվ երբ 1902 թվականի աշնանը իր երգչախմբի անդամներից մի քանիսը մեկնում են Պետերբուրգ՝ համալսարանում սովորելու, ինքը նույնպես ցանկություն է հայտնում մեկնել կոնսերվատորիայում սովորելու: Ընդառաջելով նրա ցանկությունը, տեղի հայկական կազմակերպությունները նրան ամսական 50 ռ. թոշակ են նշանակում, և նա մեկնում է Պետերբուրգ: Իր

երգչախմբի աշխատանքները շարունակելու համար նա առաջարկում է Ստեփան Դեմուրյանի թեկնածությունը, որն այդ ժամանակ աշխատում էր Մոզդոկում:

Պետերբուրգում նա իր ընկերոջ՝ Պավել Մամուլյանի օգնութեամբ պատրաստվում է ընդունելության քննություններին: 1903 թվականի մայիսին ընդունվում է պրոֆ. Վ. Պ. Կալաֆատիի դասարանը: Բայց կոնսերվատորիայում սովորելու համար նա տարեկան 300 ռ. ուսման վարձ պիտի վճարեր, մի բան, որը վեր էր նրա կարողություններից: Այս էլ պատճառ է դառնում, որ նա դուրս մնա կոնսերվատորիայից: Նրան մնում է միայն մի հնարավորություն՝ դիմել կայսերական պալատական կապելային կից երաժշտության տեսության դասընթացներին, ուր, որպես կանոն, ընդունվում էին միայն ուղղափառ քրիստոնյաները: Սակայն Ազատ Մանուկյանը, որը պատկանում էր հայ լուսավորչական եկեղեցուն, մեծ դժվարութեամբ, բացառության կարգով, ընդունվում է այդ դասընթացները: Վերջապես նա հնարավորություն է ստանում լրջորեն զբաղվել իր երաժշտական պատրաստականության բարձրացմամբ և ստանալ սիստեմատիկ կրթություն: Ուսումնական տարին ավարտում է բարձր ցուցանիշներով:

Այս տարիներին Պետերբուրգում հայ ուսանողներ շատ կային: Դրանցից ոմանք սովորում էին Պետերբուրգի համալսարանում և կամ այլ

ինստիտուտներում, ոմանք էլ կոնսերվատորիայում: Ամեն կիրակի նրանք հավաքվում էին եկեղեցում, մասնակցում երգչախմբի երգեցողությանը, իրար հետ զրուցում, նորություններ փոխանակում և այլն: Այստեղ Ազատը հանդիպում է իր դասընկերներից Տիգրան Նալբանդյանին, որը սովորում էր կոնսերվատորիայում, պրոֆ. Ս. Գաբելի դասարանում, երգիչ Ն. Շահլամյանին, կոմպոզիտոր Գրիգոր Սյունուն, որը հայկական երգչախմբի ղեկավարն էր, և շատ ուրիշների:

Ամառվա ամիսներին Ազատը մեկնում էր Հյուսիսային Կովկաս և զբաղվում խմբավարական աշխատանքով: Այսպես, 1902-1903 ուսումնական տարվա արձակուրդներին նա լինում է Ստավրոպոլում, իսկ 1903-1904 թվականներին՝ Պյատի-յորսկում, կազմակերպում է երգչախմբեր և տալիս համերգներ, որոնցից ստացած հասույթով լրացնում է իր դրամական սուղ միջոցները: Բայց 1904-1905 ուսումնական տարվա տարեվերջին, քննությունների նախօրյակին, լսելով Կովկասի փոխարքա իշխան Գրիցինի հրամանով փակված հայկական դպրոցների վերաբացելու մասին, նա ոգևորված հարազատ ժողովրդի և հատկապես մատաղ սերնդի գեղազիտական դաստիարակությանը նվիրվելու հեռանկարով, թերի թողնելով ուսումը, անմիջապես մեկնում է Կովկաս: Ամառվա ամիսները նա դարձյալ Պյատիգորսկում է անցկացնում և հայտնի գերասան Հովհաննես Աբելյանի հետ միասին տալիս է

ներկայացում-համերգներ, որոնք թե՛ հայերի և թե՛ ալլազգի ունկնդիրների կողմից ընդունվում են մեծ ոգևորությամբ: Նա իր նոր ծրագրում ավելի մեծ թվով ժողովրդական երգեր էր ավելացրել, որը, անկասկած, նպաստում է գործի հաջողությանը: Իսկ սեպտեմբերի սկզբին նա ուղևորվում է Թիֆլիս, ուր նա պիտի ստանձներ դպրոցի երաժշտական դասատուի և խմբավարի պարտականությունները:

Թիֆլիսը, որ վաղուց հայկական գրականության ու արվեստի զարգացման գլխավոր կենտրոններից մեկն էր, այս շրջանում ապրում էր մեծ հոռւզեռ: 1905 թվականի ռուսական առաջին հեղափոխության արձագանքները հասել էին նաև այստեղ և դա հատկապես զգացվում էր ոչ միայն բանվորական կազմակերպություններում, այլև դպրոցներում ու կուլտուրական հաստատություններում: Հայ մտավորականությունն առանձնապես ոգևորված էր այն բանով, որ հնարավորություն էր ստացել վերականգնելու գոլիցինյան ռեակցիայի շրջանում փակված կուլտուրական հաստատությունները և ամենից առաջ հայկական դպրոցները: Իրենց գործունեությունն էին ծավալել հայ գրողների ընկերությունը, բարեգործական ընկերությունները և այլն: Լույս էին տեսնում թերթեր ու ամսագրեր, կազմակերպվում էին դրամատիկ ներկայացումներ ու համերգներ, հրատարակվում էին տարբեր բնույթի գրքեր ու դասագրքեր:

Առանձնապես զգալի էր հեռագետը դպրոցական աշխատանքի ասպարեզում: Ընտրված դրա-
րոցական հոգաբարձություններն իրար հետ մըր-
ցելով, աշխատում էին իրենց դպրոցները ղնել
լավ հիմքերի վրա և դարձնել օրինակելի:

Թիֆլիս գալով Ազատ Մինայիչն ընկնում է
այդ հեռագետի մեջ և մեծ ոգևորությամբ սկսում
աշխատել: Նա հրաժշտության դասեր է առնում
Նորաշենի եկեղեցուն կից օրիորդաց դպրոցում,
որը նոր էր բացվել և դեռ լրիվ կազմ չունեի:
Կային միայն առաջին, երկրորդ և երրորդ դա-
սարաններ: Այդ պատճառով էլ դասաժամերը քիչ
էին, շաբաթական վեց ժամ: Ուստի աշխատա-
վարձն ավելացնելու նպատակով նրան են հանձ-
նում նաև դպրոցի մանկավարժական խորհրդի
քարտուղարի պաշտոնը:

Մանկավարժական աշխատանքում գլխավոր
դժվարությունն այն էր, որ չկային մանուկների
հոգեբանությունն արտահայտող, գրավիչ ու դյու-
րամատչելի դպրոցական երգեր: Երեխաները շատ
էին դժվարանում եկեղեցական երգերը սովորե-
լիս: Դրանց զրաբար խոսքերն անհասկանալի
էին, հրաժշտությունը ծանր ու հրեխաներին ան-
մատչելի: Մանուկյանը ելք է որոնում, փնտրում
ու գտնում է մի քանի երգեր, որոնք ժամանա-
կին իրեն սովորեցրել էին Ներսիսյան դպրոցում
և կամ տպագրվել էին Եզնիկ քահ. Երզնկյանի
կազմած և Մ. Եկմալյանի խմբագրությամբ Պե-
տերբուրգում հրատարակված փոքրիկ ժողովա-

ծուր մեջ («Քնարիկ մանկական»): Սակայն դրանք թվով շատ քիչ էին և չէին կարող բավարարել աճող պահանջները, ուստի նա ինքն էլ է փորձում երգեր հորինել:

1906-1907 ուսումնական տարվա սկզբին հոգաբարձության որոշմամբ կազմակերպվում է նորաշենի եկեղեցու քառաձայն երգչախումբը, որի ղեկավարությունը հանձնարարվում է Ազատ Մանուկյանին: Բացի այդ, նույն թվականին նրան հրավիրում են նաև Գայանյան օրիորդաց միջնակարգ դպրոցը, որպես երաժշտության դասատու: Այնպիսով, նրա համար բացվում է գործունեության լայն աստարեղ, և նա ջանք չի խնայում իր ստանձնած պարտավորությունները պատվով կատարելու համար: Առանձնապես եռանդով ու նվիրվածությամբ է աշխատում քառաձայն երգչախմբի հետ: Նա իր շուրջն է համախմբում երիտասարդության գործունյա ներկայացուցիչներին, այդ թվում՝ Միքայել Միրզոյանին, Հակոբ Հովհաննիսյանին, Ռուբեն Մամաջանյանին, Կարո Հալաբյանին, Հայկանուշ Դանիելյանին և շատ ուրիշների: Խմբի անդամների թիվը հասնում է 40-ի: Խմբավարի և խմբի տնօրենների միջև ստեղծված սերտ կապը մեծապես նպաստում է գործի հաջողությանը:

Կարճ ժամանակում խումբը այնքան է առաջադիմում, որ սկսում է մրցել ներսիսյան դպրոցի երգչախմբի հետ: Խմբավարը ոչ միայն նոր երգեր է սովորեցնում, աչլև նոտագրություն, որը

առանձնապես գրավում է երիտասարդությանը: Խմբի ելույթներն ունենում են մեծ հաջողություն: Իր մենակատարումներով հատկապես աչքի է ընկնում փոքրիկ Հայկանուշը, որը հետագայում մասնագիտական կրթություն ստանալով Պետերբուրգի կոնսերվատորիայում, դարձավ մեր ժամանակների նշանավոր երգչուհիներից մեկը:

Այս և հաջորդ ուսումնական տարին Մանուկյանը փակում է հաջողությամբ: Մանկավարժական աշխատանքին զուգընթաց շարունակում է իր համերգային գործունեությունը՝ համերգներ տալով ոչ միայն Թիֆլիսում, այլև Թելավում, Ռաթումում, Ախալքալաքում, Ախալցխայում և Հյուսիսային Կովկասի իրեն արդեն ծանոթ քաղաքներում:

1908 թվականի ամռանը Ազատը մեկնում է Պլատիգորսկ, որտեղ նորից է հանդիպում Ռոմանոս Մելիքյանին, որն արդեն աչքի ընկնող երաժիշտ էր, սովորել էր ոչ միայն Ռոստովի երաժրշտական ուսումնարանում, այլև Մոսկվայի ժողովրդական կոնսերվատորիայում և համակված էր բուն գործունեություն ծավալելու ցանկությամբ: Նրա համար նոր-նախիջևանն արդեն նեղ էր ու անձուկ: Այդ էր պատճառը, որ նա ձգտում էր մեկնել կովկասահայությունից դիսավոր կուլտուրական կենտրոն՝ Թիֆլիս, որտեղ այդ տարիներին հայկական դպրոցներն ապրում էին նկատելի եռուղեք: Ազատը նրան պատմում է, թե ինչպես են Թիֆլիսի հայկական դպրոցների վարչություն-

ներն ու հոգաբարձությունները, իրար հետ մրցելով, աշխատում օրինակելի դարձնել իրենց դպրոցները: Հատկապես զգալի աշխատանք է կատարվում՝ երգ-երաժշտության դասավանդումը կարգավորելու ուղղությամբ: Հանդես են գալիս երիտասարդ երաժիշտներ, որոնց մի մասն իր երաժշտական կրթությունն ստացել էր ռուսական կենտրոններում, իսկ ոմանք էլ՝ Մանուկյանի կազմակերպած Նորաշենի երգչախմբի անդամներ էին: Այս երիտասարդ երաժիշտների ճնշող մեծամասնությունը մանկավարժական աշխատանքով էր զբաղվում: Նույն 1908 թ. նոյեմբերին Ազատ Մանուկյանի միջնորդությամբ Ռ. Մելիքյանին հրավիրում են Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոց, որպես երաժշտության դասատու: Բնավորությամբ լինելով ձեռներեց ու կազմակերպող, նա շատ շուտով նկատում է, որ հարկավոր է համախմբել երիտասարդ երաժիշտներին և ըստեղծել մի կազմակերպություն, որն իր վրա վերցնել հայկական դպրոցներում երգ-երաժշտության դասավանդման կարգավորումը, ինչպես և մեթոդական օգնություն ցույց տալ անփորձ դասատուներին: Ահա այդպիսի կազմակերպություն հանդիսացավ «Երաժշտական լիգա» անունը կրող ընկերությունը, որն իր տեսակի մեջ առաջինն էր արեւելահայ իրականության մեջ և զգալի դորձ կատարեց: Իրենց հավաքույթներում, որոնք տեղի էին ունենում նախագահի՝ Ա. Մանուկյանի տա-

ներ, «Նրաժշտական լիգայի» անդամները քննարկում էին դպրոցներում երաժշտության դասավանդման ծրագրերը՝ աշխատելով հասնել միասնականության: Նրանք պայքարում էին երաժշտական անդրադիտության դեմ, սերտ կապ էին հաստատում գրականության և արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչների հետ և ամեն ջանք գործադրում մանկական երաժշտական գրականություն ստեղծելու և տարածելու համար: Ինչ խոսք, «Լիգայի» գաղափարական ղեկավարը Ռ. Մելիքյանն էր, որը և ուղղություն էր տալիս նրա գործունեությանը: «Լիգան» դադարեց գոյություն ունենալուց, երբ Ռ. Մելիքյանը մեկնեց Պետերբուրգ՝ սովորելու, և ձևավորվեց Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը:

Այս շրջանում Ազատ Մանուկյանն արգեն կազմել ու հրատարակել էր մանկական երգերի իր առաջին փոքրիկ ժողովածուն՝ «Փնջիկը» (1908 թ.): Ռ. Մելիքյանի նախաձեռնությամբ և Ազատ Մանուկյանի հեղինակակցությամբ ստեղծվում է նոտագրության ուսուցման ձեռնարկ՝ «Նրաժշտական ալբեմնարան», որը հետագայում հրատարակվում է Պետերբուրգում և անմիջապես տարածվում հայկական դպրոցներում:

Դպրոցական երաժշտական գրականության ստեղծման գործին մեծապես նպաստում է «Լուսաբեր» դասագրքի և «Հասկեր» մանկական ամսագրի հրատարակումը: Նրանց էջերում տպագրվում էին հայ անվանի գրողների բազմաթիվ

ոտանավորներ, որոնք շատ մոտ էին մանուկների հոգուն ու սրտին: Ազատ Մանուկյանը սերտ կապ է հաստատում այդ բանաստեղծությունների հեղինակներին՝ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Ստեփան Լիսիցյանի, Աթաբեկ Ննկոյանի, Հակոբ Աղաբաբյանի և ուրիշների հետ: Հենց այս հեղինակների բանաստեղծություններն էին, որ այս տարիներին և հետագայում վերածվում են մանկական գողտրիկ երգերի: Այս գործում նախաձեռնությունը պատկանում էր Ազատ Մանուկյանին, որն այս շրջանում ստեղծում է բազմաթիվ երգեր, որոնք ամփոփվում են «Փնջիկ»-ի չորս տետրերի մեջ և Ռ. Մելիքյանի խմբագրությամբ 1913 թ. լույս են տեսնում Պետերբուրգում: Այս տետրերում ամփոփված են Ազատ Մանուկյանի լավագույն երգերից շատերը, որոնք գողտրիկ մանրանկարներ են և աչքի են ընկնում իրենց ոճական պարզությամբ, վառ մեղեդայնությամբ ու պատկերավորությամբ: Դեռ լույս տեսնելուց շատ առաջ դրանցից շատերը «Երաժշտական լիզայի» անդամների ջանքերով արդեն լայն տարածում էին գտել Թիֆլիսի հայկական դպրոցներում, իսկ տպագրվելուց հետո՝ ամբողջ հայ իրականության մեջ: Այնպիսի երգեր, ինչպիսիք են՝ «Մարտը տալիս է ձնծաղիկ» (խոսք՝ Ղ. Աղայանի), «Փխսիկ-փխսիկ» (խոսք՝ Ա. Ննկոյանի), «Ոսկե ձվիկի հեքիաթը» (խոսք՝ Ա. Ննկոյանի), «Սագիկ-մագիկ» (խոսք՝ Ղ. Աղայանի), «Միծեռնակը բույն է շինում» (խոսք՝ Ղ.

Աղայանի), «Բաղիկ-բաղիկ» (խոսք՝ Ռ. Պատկանյանի), «Լուսը լուսացավ» (խոսք՝ Հ. Թումանյանի), «Աշուն» (խոսք՝ Հ. Թումանյանի), «Ծաղիկներ ի երգը» (խոսք՝ Ա. Խնկոյանի), «Կոունկները շարան-շարան» (խոսք՝ Ավ. Իսահակյանի), «Եկավ դարուն» (խոսք՝ Հ. Թումանյանի), «Կաքավիկ» (խոսք՝ Հ. Թումանյանի), «Էյ ջան անցան» (խոսք՝ Հ. Հայրապետյանի), «Լուսինն ելավ» (խոսք՝ Հ. Աղաբաբի) և այլ երգեր, որոնք տեղ էին գտել «Փնջիկ»-ի տետրերում, դարձել են դպրոցականների սիրելի երգերը, և նրանց վրա դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ:

Աղատ Մանուկյանի այս տարիների ստեղծագործության մեջ առանձին տեղ է զբաղում «Չարի վերջը» մանկական օպերան (ըստ Հ. Թումանյանի համանուն լեգենդի): Դա նրա առաջին ծավալուն ստեղծագործությունն էր, որն ավարտվեց 1912 թվականին: Մեծ խնամքով ու սիրով է վերաբերվել կոմպոզիտորը զրական սկզբնաղբյուրին և ամբողջապես երաժշտականացրել է այն: Ինքը կոմպոզիտորն էլ կազմել է օպերայի լիբրետոն՝ լրացնելով այն Թումանյանի այլ գործերից, բաժանելով գործողություններին, առանձնացնելով գործող անձերին և դրանցից յուրաքանչյուրին տալով երաժշտական յուրահատուկ բնութագիր: Գործող անձերի թվում պահպանել է նաև հեղինակին՝ նրա խոսքերով նկարագրելով գործողությունների հաջորդականությունը: Հեղի-

նակից բացի, որպես գործող անձեր հանդես են եկել՝ Կկուն, Աղվեսը, Ագռավը և Շունը: Հեղինակի հրգամասը կատարում է հրգչախումբը, որն սկսում ու հզրափակում է օպերան: Եթե սկըզբում՝ «Լինում է մի սար» խոսքերով գաղափար է տրվում գործողության տեղի ու հանգամանքների մասին, ապա հզրափակիչ խոսքերում ամփոփված է օպերայի գլխավոր գաղափարը. չարը պատժվում է, իսկ բարին՝ հաղթանակում:

Օպերայի երկրորդ և երրորդ գործողություններն ամբողջապես ընդգրկում են Թումանյանի լեգենդը: Բայց կոմպոզիտորը դրանով չի բավարարվել: Դրանց վրա ավելացրել է ևս մի գործողություն՝ նպատակ ունենալով պատկերել դարնան զարթոնքը և դրանով իսկ նախապատրաստել օպերայի հիմնական բովանդակության բացահայտումը:

Ինչ վերաբերում է երաժշտական մարմնավորմանը, ապա այն աչքի է ընկնում Ազատ Մանուկյանի ստեղծագործությանը հատուկ պարզության, մեղեդայնության և մատչելիության: Կոմպոզիտորն առանձին ուշադրություն է դարձրել գործող անձանց երաժշտական բնութագրին, տալով տվյալ անձին հատուկ հրգամաս:

«Չարի վերջը» մանկական օպերան իր բովանդակությամբ ու երաժշտական մարմնավորմամբ այսօր էլ չի կորցրել իր թարմությունն ու գրավչությունը և առաջվա նման գրավում է դպրոցական հասակի երեխաներին: Երբեմն այն դառնում

է մանկական ինքնագործունեութեան նշույթ, իսկ վերջերս այն կատարվեց երգչախմբային ընկերութեան կողմից հրավիրված ուժերով՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Մ. Մազմանյանի ղեկավարութեամբ։ Այն միշտ էլ լավ ընդունելութիւնն է դտնում մանուկների կողմից։

Իր կյանքի վերջին տարիներին գրած հիշողութիւններում Ա. Ղաւար պատմում է Թիֆլիսում կազմակերպված այն համերգների մասին, որն ամբողջապէս նվիրված էր Կոմիտասի և Եկմալյանի ստեղծագործութիւններին։ Այդ համերգը կազմակերպվել է իշխանուհի Մարիամ Թումանյանի նախաձեռնութեամբ։ Օգտվելով այն հանգամանքից, որ Կոմիտասը կարճ ժամանակով հյուր էր եկել իր մօտ, նա կանչում է Ա. Ղաւար Մանուկյանին և Ռոմանոս Մելիքյանին՝ խնդրելով օգնել համերգի կազմակերպմանը։ Որոշվում է օգտագործել Նորաշենի հիկեղեցու երգչախումբը, որի ղեկավարն էր Ա. Մանուկյանը։ Համերգի առաջին բաժինն ամբողջապէս կազմված էր Կոմիտասի երգերից, որոնք կատարվում են նրա ղեկավարութեամբ։ Որպէս մենակատար հանդես է գալիս Կոմիտասի աշակերտ Վահան Տեր-Առաքելյանը, իսկ երկրորդ բաժինը նվիրված էր Մալար Եկմալյանի ստեղծագործութիւններին և կատարվում է Ա. Մանուկյանի ղեկավարութեամբ։ Այս բաժնում կատարվող երգերին ֆիզհարմոնիայով նվագակցում է Ռ. Մելիքյանը։ Թիֆլիսի

ժողովարանի դահլիճում տեղի ունեցած այս համերգը անջնջելի տպավորություն է թողնում ունկընդիրներին վրա:

Հիշատակության արժանի է մի այլ դեպք ևս, որն արդեն կապված է Ալ. Սպենդիարյանի հետ: Դա տեղի է ունեցել 1916 թվականին, երբ Եվրոպայում և Ռուսաստանում արդեն հռչակված հայանվանի կոմպոզիտորը հրավիրվում է Թիֆլիս՝ հեղինակային համերգի: Սակայն, բացի դրանից, նա նպատակ էր դրել մոտիկից ծանոթանալ Թիֆլիսի հայերի երաժշտական կյանքին, ղեկավարել երաժշտության դասավանդման ղերվածքին, լսել ու ձայնագրել ժողովրդական և փոսանական երգեր:

Իր հիշողություններում Ազատ Մանուկյանը պատմում է, թե ինչպես մի օր Սպենդիարյանը Ռոմանոս Մելիքյանի ուղեկցությամբ գալիս է Գայանյան օրիորդաց դպրոց և ցանկություն հայտնում լսելու երաժշտության դասը: Ազատը սովորականի նման շարունակում է իր դասը: Երեխաներին երգել է տալիս դամբալական և ինտերվալային վարժություններ՝ կապված օրվա դասի հետ, ապա նաև օրվա հիմնական դասը: Սպենդիարյանն աշակերտների ունակություններն ստուգելու նպատակով զրատախտակին գրում է նոր վարժություն, կանչում է աշակերտուհիներին մեկին, որը համարյա թե անսխալ կերպով երգում է վարժությունը: Հետո Սպենդիարյանի ղեկավարությամբ ամբողջ դասարանը երգում է

միևնույն վարժությունը: Նա դո՛հ հեռանում է դպրոցից՝ բարձր գնահատելով Մանուկյանի աշխատանքը: Այդ նույն տպավորության տակ, հաջորդ օրը, Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի ճաշկերույթի ժամանակ նա դրվատական խոսքեր է ասում Ազատի մասին, որոնք և պատճառ են դառնում, որ ուսումնարանի վարիչ, ռուս կոմպոզիտոր Ն. Նիկոլաևը գա և լսի նրա դասը և ապա նրա աշակերտներից մի քանիսին առանց քննության ընդունի ուսումնարան:

1916 թվականն Ազատ Մանուկյանի ստեղծագործական կյանքում նշանավոր է նրանով, որ նա Միքայել Նալբանդյանի մահվան 50-ամյակի կապակցությամբ ձայնագրում և քառաձայն երգչախմբի համար մշակում է «Ազատն աստված», «Մանկության օրեր» և «Մեր հայրենիք» երգերը, որոնք լույս են տեսնում «Երեք խմբերդ Միքայել Նալբանդյանի երգերից» վերնագրով: Դա հեղինակի հարգանքի տուրքն էր մեծ դեմոկրատ-հեղափոխականի հիշատակին:

1917 թվականին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրյակին, Նորաշենի եկեղեցուն կից դպրոցի հոգաբարձությունը մի շարք միջոցներ է ձեռնարկում՝ ուժեղացնելու կրոնի դասավանդումը և ավելի մեծ տեղ տալու հոգևոր երաժշտությանը: Դպրոցի ղեկավարությունը բոլոր ուսուցիչներին պարտադրում է ներկա լինելու աշակերտների հաղորդման ծեսին: Ազատը, որը տարիներ շարունակ շփվելով բա-

նաստեղծ Հակոբ Հակոբյանի և նրա ընկերների հետ, իր վրա կրում էր նրանց ազատասիրական հայացքների ազդեցությունը, չի ենթարկվում դպրոցի ղեկավարության կարգադրությանը: Սա էլ պատճառ է դառնում, որ նրան արվի նկատողություն, իսկ երբ տեղի է ունենում քաղաքային դոմայի ընտրությունը և Ազատը իր քվեն տալիս է 5-րդ ցուցակին (բոլշեիկների), այս մասին լուրերը հասնում են դպրոցի ղեկավարությանը, ներան հեռացնում են դպրոցի ուսուցչական կազմից: Սակայն աշակերտների ծնողական ընդհանուր ժողովի պահանջով նրան վերահաստատում են իր նախկին պաշտոնում:

Այս նույն թվականին Ազատ Մանուկյանը, բանաստեղծ Հակոբ Հակոբյանի առաջարկով, ձայնագրում ու հրատարակում է բանվորական հեղափոխական երգերից չորսը՝ «Բանվորական մարսելիոզը», «Առաջ, տղերք», «Վարշավյանկա» և «Մահվան քայլերդ»: Երգերի խոսքերը դեռ 1905 թվականի ուսական հեղափոխության տարիներին թարգմանել էր Հակոբ Հակոբյանը և տպագրելով բոլշեիկյան թերթերում, ինչպես և թուրքիկներով ու առանձին գրքույկով, տարածել հայ բանվորության և ուսանողության շրջանում: Իսկ եղանակները փոխանցվում էին բանվոր ավանդույթի ուժով, բերնբերան: Ինչ վերաբերում է այս չորս երգին, Ա. Մանուկյանի ձայնագրությամբ ու մշակմամբ լույս են տեսնում «Հեղափոխական երգեր» վերնագրով փոքրիկ

ժողովածուի ձևով: Նղանակների տակ կային թե՛
ուսերեն խոսքերը և թե՛ նրանց հայերեն թարգ-
մանությունը: Երբ Թիֆլիսում կաղմակերպվում
են բանվորական ցույցեր, Հակոբ Հակոբյանն
այդ երգերը բաժանում է ցուցարարներին: Այս
երգերը հետզհետե մուտք են գործում նաև ղեպ-
րոցները:

1-ին համաշխարհային իմպերիալիստական պա-
տերազմի տարիներին ամբողջ Անդրկովկասը հե-
ղեղվում է հայ զաղթականներով, որոնք զրկված
տնից ու տեղից, կրելով անասելի զրկանքներ,
տառապանքներ, հազիվ մազապուրծ ազատվել
էին թուրք հրոսակախմբերի հետապնդումից, ա-
պաստան գտել այստեղ: Նրանց անհրաժեշտ էր
նյութական օժանդակություն, ջերմ ու սրտացավ
վերաբերմունք: Հայ բարեգործական ընկերու-
թյուններից բացի, այս գործում մեծ էր նաև
զրոգների ու կոմպոզիտորների, հայ ամբողջ մը-
տավորականության դերը: Եվ իսկապես այս տա-
րիներին Ազատ Մանուկյանն ու իր ընկեր երա-
ժիշտ-մանկավարժները հաճախակի կաղմակեր-
պում էին համերգներ՝ ստացված ամբողջ հասույ-
թը հատկացնելով բարեգործական նպատակների:

Ազատ Մանուկյանն առաջվա նման շարունա-
կում էր իր երաժշտական-մանկավարժական ու
խմբավարական գործունեությունը, զուգահեռա-
բար զբաղվելով նաև ստեղծագործությամբ: Ա-
ռաջվա նման նա դարձյալ ամառային արձա-
կուրդների ամիսներին մենակ կամ ընտանիքով

մեկնում էր Պյատիգորսկ՝ հանգստանալու և երբեմն էլ համերգներ տալու նպատակով: Հիշատակության արժանի է 1918 թվականի ամռանը կազմակերպված մեծ համերգը: Այդ տարի Պյատիգորսկում հավաքվել էին հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ: Նրանց մեծ մասը տեղավորված էր բժիշկ Բուդաղյանի կառուցած սանատորիայում, որից օգտվում էին մանկավարժության ասպարեզում աշխատողները: Համերգը կազմակերպվում է այս սանատորիայի բարեկարգման ֆոնդի օգտին: Բացի երգչախմբից, որը ելույթ է ունենում Ազատ Մանուկյանի ղեկավարությամբ, համերգին մասնակցում է նաև հայտնի երգիչ Ամիրազոն (Ամիրաղյանը): Երեկոն բացում է ռուս նշանավոր բանաստեղծ Կ. Բալմոնտը: Հասարակության պահանջով բեմ է հրավիրվում նաև ժողովրդական բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը նույնպես ջերմ խոսքեր է ասում: Համերգն անցնում է բուռն ոգևորությամբ և հաճույք պատճառում ներկաներին: Այս համերգը հաջողությամբ կրկնվում է Կիսլովոդսկում:

Սովետական կարգերի հաստատումից հետո Թբիլիսիի դպրոցները վերակառուցվեցին և դարձան աշխատանքային դպրոցներ: Իր հիմնական աշխատանքին զուգընթաց Ա. Մանուկյանը եռանդով մասնակցում է երաժշտական-հասարակական աշխատանքներին: Թբիլիսիում գոյություն ունեցող երաժշտական ու գրական կազմակերպու-

Թյունները միավորվեցին, և դրանց հիման վրա ստեղծվեց Հայ արվեստի տունը (Հայարտուն), որը ղեկավարում էր բոլորի կողմից սիրված բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Հայարտան համապատասխան սեկցիաներում միավորվեցին գրողներ, երաժիշտներ, դրամատիկ թատրոնի դերասաններ, նկարիչներ: Ծավալվում է եռուն ու ստեղծագործ աշխատանք բոլոր բնագավառներում: Երաժշտական սեկցիայի կազմակերպման նախաձեռնությունը սլատկանում էր Ռ. Մելիքյանին, որն իր շուրջն է համախմբում բոլոր երաժիշտներին՝ կոմպոզիտորներին, երաժիշտ-մանկավարժներին ու կատարողներին: Սեկցիայի նախաձեռնություններից մեկն էլ երաժշտական ստուդիայի ստեղծումն էր, որի շնորհիվ հայ մանուկները հնարավորություն ստացան ձեռք բերելու երաժշտական կրթություն: Բայց Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերից հայ երաժիշտների և հատկապես Ռ. Մելիքյանի ուշադրության կենտրոնում էր Երևանը, որտեղ արդեն հիմնադրվել էին համալսարան և կուլտուրական այլ հաստատություններ: Անհրաժեշտ էր միջոցներ ձեռնարկել մայրաքաղաքի երաժշտական կյանքի կազմակերպման համար: Հայարտան երաժշտական սեկցիայի շուրջը համախմբված գործիչները սլատրաստ էին իրենց ուժերը ներդնելու այդ շնորհակալ գործում: Եվ ահա նրանցից առաջինները՝ Ռ. Մելիքյանը, Ա. Մանուկյանը և Սպ. Մելիքյանը, 1921 թվական-

նին մեկնում են Երևան և յուրաքանչյուրն իր
 բնագավառում ծավալում հռանդուն գործունեու-
 թյուն: Ռ. Մելիքյանը ձեռնամուխ է լինում Երե-
 վանում երաժշտական ստուդիայի ստեղծմանը,
 Սպիրիդոն Մելիքյանն անցնում է էջմիածին՝
 Մատենադարանում իր գիտա-հետազոտական աշ-
 խատանքները շարունակելու, իսկ Ազատ Մանուկ-
 յանը մեկնում է Ղարաբաղիսա (այժմ՝ Կիրովա-
 կան), որպես Լուսժողկոմատի դպրոցական-երա-
 ժըշտական բաժնի հրահանգիչ: Նա Կիրովականի
 դպրոցներում մեթոդական օգնություն է ցույց
 տալիս երաժշտության դասատուներին, իրեն հա-
 տուկ հռանդով նպաստում է մանկական-դպրո-
 ցական երգչախմբերի կազմակերպմանը և հա-
 ճախ ինքն է երգեր սովորեցնում նրանց ու
 նախապատրաստում ցերեկույթներ: Սակայն հա-
 ջողությամբ սկսած գործը շուտով ընդհատվում է,
 որովհետև նա ծանր հիվանդանում է և ստիպված
 է լինում վերադառնալ Թբիլիսի, իր ընտանիքի
 մոտ: Ապաքինվելուց հետո նա նորից ստանձնում
 է իր մանկավարժական աշխատանքը նախկին
 դպրոցներում: Այս շրջանում Թբիլիսիի հայկա-
 կան դպրոցներում, որպես երաժշտության դասա-
 տուներ աշխատում էին Ա. Տիգրանյանը, Մ.
 Միրզոյանը, Կ. Զաքարյանը, Մ. Մազմանյանը,
 Վ. Տալյանը, Դ. Ղազարյանը, Ե. Սարգարյանը և
 շատ ուրիշներ, որոնք ներգրավված էին երաժը-
 տական սեկցիայի աշխատանքներում: Դպրոցա-
 կան ցերեկույթ-համերգների կազմակերպումը,

մանկական օպերաների բեմադրումը, մասսայական համերգների կազմակերպումը և այլն դարձել էին սովորական երևույթ: Եվ այս բոլոր ուղղություններով Մանուկյանը ցուցաբերում է երիտասարդական եռանդ ու ոգևորություն:

1925 թվականին Հայարտան նախաձեռնությամբ նշվում է Ազատ Մանուկյանի երաժշտական-մանկավարժական գործունեության 25-ամյա հոբելյանը: Կազմակերպված համերգի ծրագրում տեղ էին գտել նրա ստեղծագործություններից բազմաթիվ նմուշներ՝ խմբերգեր ու մեներգեր: Նրա աշխատանքային ընկերներն ու բարեկամները չէին խնայում դրամատանքի խոսքեր՝ ընդգրծելու նրա վաստակը հայ մանկական երաժշտական ստեղծագործության զարգացման, խմբական երգի տարածման և մանկավարժական աշխատանքի բնագավառում:

Նույն թվականի աշնանը Ազատը մեկնում է Վլադիկավկազ, որտեղ փաստորեն նա սկսել էր իր երաժշտական-հասարակական գործունեությունը և ունեցել առաջին հաջողությունները: Տեղի հասարակայնությունը, առիթից օգտվելով, որոշում է նշել նրա գործունեության 25-ամյակը: Կազմակերպվում է հատուկ երեկո-համերգ, նրվիրված նրա ստեղծագործություններին: Համերգըն անցնում է առանձին հանդիսավորությամբ:

Այս և հետագա տարիներին Ազատ Մանուկյանը հիմնականում զբաղվելով երաժշտական-մանկավարժական աշխատանքով, միաժամանակ

«Զարի վերջը» օպերայի բեմադրությունը: Դրանից առաջ և դրանից հետո այն բազմիցս բեմադրվել է աշակերտների ուժերով: Սակայն այս անգամ, Ռադիոկոմիտեի մանկապատանեկան հաղորդումների խմբադրության (խմբագիր՝ Գ. Բադալյան) օժանդակությամբ, հրավիրվում են մայրաքաղաքի աչքի ընկնող արտիստական ուժերը, որոնք ռեժիսոր Ա. Աղասյանի ղեկավարությամբ նախապատրաստում են ռադիոբեմադրությունը: Այն առաջին անգամ հնչում է 1936 թվականի հունվարի 7-ին և ունենում բացառիկ հաջողություն: Խմբադրությունն ստանում է բազմաթիվ հիացական նամակներ և ներկայացումը կրկնելու ցանկություններ:

Ռադիոբեմադրության հաջողություններից ոգևժնված որոշվում է «Զարի վերջը» բեմադրել մայրաքաղաքի դահլիճներից մեկում: Ներկայացման նախաձեռնողներին սիրով տրամադրվում է կուլտուրայի տան (այժմ՝ Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճ) հանդիսասրահը: Երգչախումբը ղեկավարում է ինքը՝ Ազատ Մանուկյանը: Օպերան բեմադրվում է 1936 թվականի հունիսի 6-ին և ունենում է բացառիկ հաջողություն: Հանդիսականները բազմիցս բեմ են հրավիրում հեղինակին, ռեժիսորին ու գլխավոր դերակատարներին և աղմկալից ծափահարություններով ողջունում նրանց հաջողությունները: Այնքան մեծ էր օպերայի հաջողությունը, որ մի քանի օրից այն կրկնվում է լեփ-լեցուն դահլիճի ներկայությամբ:

Նոր լիցք ստացած ու ոգևորված, նա երգեր է
 գրում դպրոցական տարբեր հասակի երեխաների
 համար, մեներգի ու խմբերգի համար մշակում է
 ժողովրդական երգեր, գրում նոր երգեր հայ բա-
 նաստեղծների տեքստերով, էստրադային երգեր և
 այլն: Բայց առավել կարևոր է նրա կատարած
 աշխատանքը մանկական օպերաների ու երաժշ-
 տական պատկերների ստեղծման բնագավառում:
 Դեռ 1923 թվականին նա գրում է «Երազ» («Ան-
 տառի արքան») մանկական օպերան Հ. Հայրա-
 պետյանի լիբրետոյի հիման վրա, 1937 թվակա-
 նին՝ «Ոսկե ձվիկի հեքիաթը» (լստ Պուշկինի, Ղ.
 Աղայանի թարգմանությամբ) երաժշտական
 պատկերը, 1939 թվականին՝ «Սասունցի մանուկ
 Դավիթ» (լստ Վր. Մանվելյանի լիբրետոյի)
 մանկական օպերան, մի քիչ ավելի ուշ, 1946 թ.
 «Համառ գորտը» (խոսք՝ Վ. Մխիթարյանի)
 երաժշտական պատկերը փոքրահասակների հա-
 մար: Բոլոր այս մանկական օպերաներն ու երա-
 ժշտական պատկերները ամբողջությամբ կամ
 հատվածաբար կատարվել են դպրոցական ինք-
 նագործ խմբերի կողմից և արժանացել երեխա-
 ների և նրանց ծնողների բարձր գնահատակա-
 նին: Այս ստեղծագործություններն ավելի հազ-
 վադեպ են կատարվում, թեև դրանցից չուրա-
 քանչյուրն իր մեջ պարունակում է հնոաբրբեր
 շատ բան երեխաների հոգեկան աշխարհի ձևա-
 վորման և նրանց էսթետիկական դաստիարակու-
 թյան տեսակետից: Այս բոլոր գործերում էլ հե-

դինակին հաջողվել է երաժշտության օգնությամբ ավելի ցայտուն դժերով դրսևորել նրանց բովանդակությունը և շեշտը դնել հերոսների դրական հատկանիշների վրա: Նրանց մեջ միշտ էլ հաղթանակողը բարին է, բարոյականը, դրականը, իսկ այդ հանգամանքը մեծապես բարձրացնում է նրանց դաստիարակչական նշանակությունը:

Ազատ Մանուկյանը կազմել ու հրատարակել է նաև «Պուշկինը դպրոցական երաժշտության մեջ» (1937), «Դպրոցական երգարան» (1941 և 1950) և այլ ժողովածուներ՝ ընդգրկելով հայ կոմպոզիտորների մանկական լավագույն երգերը: Նա առանձին կարևորություն էր տալիս մանկական թերթերին ու ամսագրերին աշխատակցելուն, որոնց միջոցով նա սերտորեն կապվում էր ոչ միայն Նրեանի ու Հայաստանի, այլև հեռավոր վայրերում ապրող ու սովորող մանուկների հետ: Սրանով պետք է բացատրել նրա մշտական կապը «Պիոներ կանչ» թերթի և «Հոկտեմբերիկ» ամսագրի խմբագրությունների հետ, որոնց էջերում տպագրում է նորանոր երգեր:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ազատը կրկնապատկված եռանդով է շարունակում իր մանկավարժական գործունեությունը: Չէ՞ որ իր աշակերտներից և կուլեգաներից շատերը մեկնել էին ռազմաճակատ: Անհրաժեշտ էր աշխատել և՛ իր, և՛ նրանց փոխարեն: Առաջվա նման նա շարունակում է դեկավարել Ռադիոկոմիտեի մանկական երգչախումբը: Դրա հետ միասին նա իր

վրա է վերցնում նաև Երևանի Ուսուցչի տան և «Արարատ» տրեստի ինքնագործ երգչախմբերը՝ իր համառ ու համբերատար աշխատանքով բարձրացնելով սրանց կատարողական արվեստը: Հատկապես, «Արարատ» տրեստի երգչախումբը ինքնագործ խմբերի հանրապետական օլիմպիականներում շահել է առաջնություն:

Ազատ Մանուկյանի անձնվեր աշխատանքը միշտ էլ բարձր է դնահատվել: Դեռ 1935 թ. նա արժանացել է Հայաստանի կառավարության բարձր պարգևին՝ Աշխատանքի հերոսի պատվավոր կոչմանը, իսկ 1936 թվականին Վրաստանի կառավարությունը նրան շնորհում է Արվեստի վաստակավոր դորձի կոչում: Հետագա տարիներին նա արժանանում է վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչմանը, պարգևատրվում Աշխատանքային Կարմիր դրոշի և ապա Լենինի շքանշաններով: Նա բազմիցս արժանացել է պատվոգրերի և շնորհակալագրերի:

Հետպատերազմյան տարիներին, ոգևորված սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակով, նա նույն եռանդով ու նվիրվածությամբ շարունակեց իր մանկավարժական-մեթոդական, խմբավարական, երաժշտական-հասարակական ու ստեղծագործական աշխատանքը: Նա առանձին ուշադրություն է դարձնում մանկատների ու պիոներական ճամբարների վրա, սովորեցնում նոր երգեր և իր մասնակցությունը ոգևորում նրանց: Որտեղ էլ երևար ծերունազարդ

կոմպոզիտորը՝ դպրոցում, մանկատանը, պիոնե-
րական ճամբարում, թե փողոցում ու հրապարա-
կում, նրան անմիջապես շրջապատում էին մա-
նուկները, և սկսվում էր աշխույժ զրույցն ու
կատակը: Մինչև կյանքի վերջը պահպանելով իր
երիտասարդական աշխույժն ու ոգևորությունը,
շրջապատված իր կողմից ջերմորեն սիրված մա-
նուկներով, նա իսկապես դարձել էր մանուկների
ու պատանիների սիրելին: Իրրև այգայիսին էլ նա
իր կյանքի 80-րդ տարում, 1958 թվականին, կրն-
քեց իր մահկանացուն՝ հայ մանուկներին որպես
անզնահատելի ժառանգություն թողնելով իր
գողտրիկ ստեղծագործությունները և բարի ա-
նունը:

Ինչպես վերը տեսանք, Ազատ Մանուկյանի
մանկավարժական-հասարակական, համերգային
և ստեղծագործական գործունեությունը ծավալ-
վեց մեր դարի սկզբներին և տևեց ավելի քան
վաթսուն տարի: Դա մի ժամանակաշրջան էր,
երբ հայ երաժշտության երկնակամարում փայ-
լում էին Կոմիտասի և Ալ. Սպենդիարյանի ա-
նունները, երբ հանդես էին եկել Ռ. Մելիքյանը,
Գ. Սյունին, Ա. Տիգրանյանը, Ս. Բարխուդարյա-
նը, Ա.Ն. Տեր-Ղևոնդյանը և այլ կոմպոզիտորներ:
Իրենցով նրանց ժամանակակիցը և կրելով նրանց
ստեղծագործության բարերար ներգործությունը,
Ազատ Մանուկյանը կարողացավ ճիշտ կողմնո-

րոշվել և ընտրել այն բնագավառը, որտեղ ամենից ավելի կարող էր օգտակար լինել հարազատ ժողովրդին: Իր ուսուցիչներից՝ Մ. Եկմալյանից և Բ. Կարա-Մուրզայից ժառանգելով սերը ժողովրդական երաժշտության նկատմամբ, նա իր ամբողջ կյանքի ընթացքում մնաց հարազատ այդ ղգացմունքին և իր ստեղծագործությանմբ ու համերգային գործունեությանմբ միշտ բարձր պահեց ժողովրդական երաժշտության դրոշը, այն օգտագործելով աշխատավորության և հատկապես երեխաների էսթետիկական դաստիարակության համար:

Որպես երաժիշտ-մանկավարժ նա շատ լավ էր զգում, թե երաժշտության բնագավառում ինչ էր պակասում երեխաներին, և բոլորովին էլ պատահական չէր այն, որ նա իր բոլոր ուժերը դերադանցապես ներդրեց դպրոցական հասակի երեխաների համար երաժշտական սնունդ նախապատրաստելու գործում: Իր երաժիշտ ընկերների՝ Մ. Միրզոյանի, Դ. Ղազարյանի, Մ. Մաղմանյանի, Ե. Սարգարյանի, Ս. Մուրադյանի հետ միասին նա շատ շնորհակալ գործ կատարեց՝ ստեղծելով այնպիսի գործեր, որոնք մոտ էին հարազատ մանուկների հոգեբանությանը, դյուրամբընդունելի, մեղեդիական ու զրավիչ: Իր առաջին մանկական երգերում, որոնք ամփոփվեցին 1908 թ. հրատարակված «Փնջիկ»-ի տետրում, արդեն երևում էին հեղինակի երաժշտական մտածողության յուրահատկությունները, որոնք հետագա-

յում ավելի ցայտուն կերպով հանդես եկան նրա մանկա-պատանեկան երաժշտական ստեղծագործություններում:

Աղատ Մանուկյանի մանկական երգերի աչքի ընկնող առավելություններից առաջինը խոսքի ընտրությունն էր: Որպես կանոն, նա իր երգերի համար ընտրել է այնպիսի բանաստեղծություններ, որոնք պարզ են ու պատկերավոր, հեշտությամբ են ընկալվում, զրված են մանուկների հոգեկան աշխարհը լավ ճանաչող մանկավարժ-գրողների կողմից: Նրա երգերի խոսքերը գերազանցապես վերցված են Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ա. Խնկոյանի (Խնկո-Ապեր), Հ. Աղաբաբի, Հ. Հայրապետյանի և այլոց բանաստեղծություններից: Նրա «Փնջիկ»-ների տետրերի մեջ ամփոփված երգերի ճնշող մեծամասնությունը վերոհիշյալ բանաստեղծների խոսքերով են: Այդ երգերը գեղարվեստական խոսքի և երաժշտության միասնություն են կազմում: Դրանք այնպիսի գործեր են, որոնք առաջին անգամ ունկնդրելուց հետո մանուկների հիշողության մեջ խոր հետք են թողնում և դառնում նրանց անբաժանելի սեփականությունը: Պարզ մեղեդին, աշխույժ ռիթմը, մոտ ու հարազատ պատկերները և հեշտ ընկալվող ինտոնացիաները միասին հյուսում են անկրկնելի գեղեցկությամբ աչքի ընկնող այդ անպաճույճ երգերը: Դրանցից են՝ «Մարտը տալիս է ձնծաղիկ», «Ծիծեռնակը բույն է շինում», «Փիսիկ—փիսիկ», «Պղզան—պղզան»,

«Ոսկե ձվիկի հեքիաթը» և շատ այլ երգեր, որոնք իրենց ստեղծման օրից մուտք են գործել դպրոց, ձեռք բերել լայն ժողովրդայնություն և դաստիարակել մանուկների բազմաթիվ սերունդներ:

Սովետական իշխանության տարիներին նույնպես Ազատ Մանուկյանը ստեղծեց բազմաթիվ երգեր Գ. Սարգսնի, Ա. Վշտունու, Սարմենի, Ս. Վահունու, Մ. Կորյունի, Վ. Վարդանյանի, Վ. Աղասյանի, Վ. Տալյանի և ուրիշների խոսքերով: Այս շրջանի երգերից առանձնապես պետք է հիշատակել «Ծիտիկի օրորը», «Ծառն ու մանկիկը» և մի շարք այլ երգեր, որոնք նույնպես նվաճել են մանուկների բացառիկ սերը:

Երգերի հետ միասին Ազատ Մանուկյանի ըստեղծագործության մեջ առանձնակի տեղ են զբաղում մանկական օպերաներն ու երաժշտական պատկերները: Վերն արդեն մենք առիթ ունեցանք խոսելու «Չարի վերջը» օպերայի մասին, որը լավագույնն է այս ժանրի նրա ստեղծագործություններից և կարևոր տեղ է զբաղում մանկական ինքնագործունեության համար զբաղած այս տիպի ստեղծագործությունների մեջ:

Ազատ Մանուկյանի ստեղծագործությունը գերազանցապես զբաղած է դպրոցական հասակի երեխաների համար: Այնտեղ մենք գտնում ենք համապատասխան ստեղծագործություններ թե՛ փոքրահասակների, թե՛ միջին տարիքի և թե՛ բարձր դասարանների երեխաների համար: Լինե-

լով փորձված մանկավարժ և լավ գիտենալով տարբեր հասակի երեխաների հետաքրքրությունները, կոմպոզիտորը կարողանում է դրանք հաշվի առնել իր ստեղծագործական աշխատանքում: Դրանով պիտի բացատրել այն, որ նրա երգերն այդքան արագ կերպով էին մուտք գործում դրսերոցներն ու պիտներական ճամբարները և դառնում երեխաների սեփականությունը:

Սակայն սխալ կլիներ կարծել, որ Ազատ Մանուկյանի ստեղծագործությունը բացառապես մանկական է: Ծիշտ է, նրա մեջ հիմնական տեղը պատկանում է մանկա-պատանեկան երաժշտությանը, բայց դրա կողքին առկա են նաև մեծահասակների համար զրված երաժշտական ստեղծագործությունները: Վերը մենք արդեն հիշատակել ենք «Հեղափոխական երգեր» և «Երեք խմբերից Մ. Նալբանդյանի երգերից» ժողովածուների մասին, որոնք մշակված էին քառաձայն երգչախմբի համար: Պետք է նշել նաև «Երեք խմբերից» քառաձայն խմբի համար (1924 թ.) ժողովածուն, որի մեջ մտնում էին «Մեկնմայիսյան հիմն», «Կարմիր դարնան» և «Դարբնոցը» խմբերգերը: Սրանցից ամենահաջողվածը «Կարմիր դարնան» (խոսք՝ Հ. Հակոբյանի) խմբերգն է, որի մեջ կոմպոզիտորը հասել է երգչախմբի հնարավորությունների օգտագործման բարձր մակարդակի, միաձուլյալ ու միահամուռ հնչողության: Ընդհանրապես այս խմբերգը ոչ միայն Ազատ Մանուկյանի լավագույն խմբերգն է, այլև հայկական

խմբերգային գրականության աչքի ընկնող գործերից մեկը:

Ազատ Մանուկյանը քիչ ուշադրություն չի դարձրել նաև ժողովրդական և աղգային-հայրենասիրական երգերի մշակմանը: Ժողովրդական երգը միշտ էլ նրա համար ծառայել է որպես ոգևորության աղբյուր՝ տարբեր բնույթի ստեղծագործական խնդիրներ լուծելիս: Ինչ վերաբերում է աղգային-հայրենասիրական երգերին, ապա դրանք կոմպոզիտորի ուշադրությունը գրավեցին հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ հայրենասիրական թեման առանձին հրատապություն էր ձևաք բերել: Կոմպոզիտորը դրանք մշակում է քառաձայն երգչախմբի համար և կազմում առանձին ժողովածու, բաղկացած 12 երգից: Այդ երգերը հաճախ են կատարվել նրա ղեկավարած երգչախմբերի կողմից և ծառայել իրենց նպատակին՝ հայրենասիրական զգացմունքների արթնացմանն ու ամրապնդմանը:

Ազատ Մանուկյանի ստեղծագործությունը բացառապես վրդալ է: Անտեքստ գործիքային և րաժշտությունը նրա հետաքրքրություններից դուրս էր: Սովետական տարիներին գրած նրա բոլոր երգերը հեղինակի կողմից խմբավորված են «Փնջիկ»-ների 10-ից ավելի ժողովածուներում, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է 10—12 երգ: Այդ «Փնջիկ»-ների մեջ երգերը դասավորված են ըստ հասակների («Փնջիկ»-մանկական

երգեր՝ փոքրահասակների համար, երկձայն երգեր մեծահասակների համար, էստրադային զուգերգեր, ժողովրդական երգերի մշակումներ, քառձայն երգեր և այլն)։

Ստեղծագործական այս ժառանգությունը, որ կոմպոզիտորը թողել է իր կողմից ջերմորեն սիրված մանուկներին և հարազատ ժողովրդին, վկայում է նրա հոգեկան բարձր հատկութունները և իր ժամանակի հրատապ հարցերով ապրելու կարողությունը։ Նա կարողանում էր խորապես հուզվել նոր կյանքի յուրաքանչյուր ծլարձակումով և իր հույզերն ու ապրումները մարմնավորելով գոգարիկ երգերի մեջ, հուզել նաև իր ժամանակակիցներին։ Այս է պատճառը, որ Ազատ Մանուկյանի ստեղծագործությունները պահպանել են իրենց թարմությունը և այսօր էլ շարունակում են կատարել իրենց գլխավոր խնդիրները՝ նպաստել աճող սերնդի, մեր օրերի նոր մարդու կոմունիստական դաստիարակության կարևոր գործի ասպհովմանը։

Յ Ա Ն Կ

Ա. Մանուկյանի ստեղծագործություններ

1. «Փնջիկ» մանկական երգերի, Թիֆլիս, 1908
2. Երաժշտական այբբենարան (հեղինակակից՝ Ռ. Մելիքյան):
Առաջին մաս, Թիֆլիս, 1912
Երկրորդ մաս, Թիֆլիս, 1912
3. «Փնջիկ» մանկական երգերի (խմբագիր՝ Ռ. Մելիքյան):
Տետր Ա., Պետերբուրգ, 1914
4. «—» Տետր Բ., Պետերբուրգ, 1914
5. «—» Տետր Գ., Պետերբուրգ, 1914
6. «—» Տետր Դ., Պետերբուրգ, 1914
7. Երեք խմբերգ Մ. Նալբանդյանի երգերից, Թիֆլիս, 1916:
8. Հեղափոխական երգեր (Խորհմ.՝ 2. Հակոբյանի),
Թիֆլիս, 1917:
9. Երեք խմբերգ քառաձայն երգչախմբերի համար, Թիֆլիս, 1920:
10. Պուշկինը դպրոցական երաժշտության մեջ (ժողովածու, կազմ.՝ Ա. Մանուկյան), Հայպետհրատ, Երևան, 1937:
11. Դպրոցական երգարան, կազմ.՝ Ա. Մանուկյան: Հայպետհրատ, Երևան, 1941:
12. «Ձարի վերջը» (ըստ 2. Թումանյանի լեզենդի), օպերա մանուկների համար, 3 գործ, Հայպետհրատ, Երևան, 1958:
13. Դպրոցական երգեր Ղազարոս Աղայանի ստեղծագործություններից (ժողովածու), Հայպետհրատ, Երևան, 1941:

Մարկոս Հովհաննէսի Մուրադյան
Ազատ Մանուկյան

Матевос Оганесович Мурадян

Азат Манукян

(На армянском языке)

Издательство «Айастан», ул. Теряна, 91
Ереван 1977

Խմբագիր՝ Բ. Ս. Բրուտյան

Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան

Տեխ. խմբագիր՝ Լ. Գ. Փիւրովյան

Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ն. Մելիսյան

Հանձնված է շարվածքի 30/VI 1976 թ.:

Ստորագրված է տպագրության 4/III 1977 թ.:

Թուղթ տպագր. №1, $70 \times 90^{1/32}$, տպագր. մամ 1,88 = սլայմ.

2,12 մամ., հրատ. մամ 1,7 + 1 ներդիր: Պատվեր 2360:

Տպարանակ՝ 500: Դիւնը՝ 9 կոպ.: Վճ. 00043:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տեղյան 91:

ՀՍՍՀ Մրինստրների սովետի հրատարակչությունների,
պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կոմիտեի Արտաշատի տպարան:

Арташатская типография Госкомитета Совета
Министров Арм. ССР по делам издательств, по-
лиграфии и книжной торговли.

գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0054723

ԳԻՆԸ՝ 9 Կ.

44

